Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-603-29.05.2023-ԱՍ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» 2021 թվականի մայիսի 5-ի ՀՕ-194-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 9-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

2) 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 12.1-ին կետով՝ «12.1) անկախ կյանքի ծառայություն՝ ծառայություններ, ծրագրեր, միջոցառումներ՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձի անկախ կյանքի ապահովմանը.».

3) 1-ին մասի 16-րդ կետում «տրամադրելու» բառից հետո լրացնել «կամ վերանորոգելու» բառերը.

4) 1-ին մասի 18-րդ կետում «աջակցող միջոցի տրամադրման» բառերից հետո լրացնել «կամ վերանորոգման» բառերը.

5)) 1-ին մասի 19-րդ կետում եւ 10-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-ին կետում «աջակցող միջոցների տրամադրման» բառերից հետո լրացնել «եւ վերանորոգման» բառերը:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասում «եւ տարեկան ծրագրերին» բառերը փոխարինել «ծրագրին» բառով:

Հոդված 3. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝

1) բ. ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

2) դ. ենթակետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ «դ. հաստատում է հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող միջոցներ տրամադրելու եւ դրանց վերանորոգումն իրականացնելու կարգը եւ պայմանները, աջակցող միջոցների ցանկը, պետական հավաստագրերի եւ դրանց հիման վրա

տրամադրվող աջակցող միջոցների վերանորոգման փոխհատուցման գումարի չափը, առանց պետական հավաստագրերի տրամադրվող աջակցող միջոցների եւ դրանց վերանորոգման փոխհատուցման գումարի չափը,».

3) ե. ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

4) է. ենթակետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 2-րդ կետում «եւ տարեկան ծրագրերի նախագծերը եւ դրանք» բառերը փոխարինել «ծրագրի նախագիծը եւ» բառերով.

2) 5-րդ կետում հանել «ցուցումների» բառը եւ «ուղեցույցներ» բառից հետո լրացնել «՝ ըստ անհրաժեշտության» բառերը.

3) 5.1-ին կետում «տրամադրելու» բառից հետո լրացնել «կամ վերանորոգելու» բառերը:

Հոդված 5. Օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ եւ 5-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 6. Օրենքի 12-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 7. Օրենքի 15-րդ հոդվածի 17-րդ մասում «եւ տարեկան ծրագրերի» բառերը փոխարինել «ծրագրի» բառով:

Հոդված 8. Օրենքի 17-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում «եւ տարեկան ծրագրերով» բառերը փոխարինել «ծրագրով» բառով.

2) 4-րդ մասում «սույն օրենքն ուժի մեջ է մտնելուց հետո՝ երեք տարվա ընթացքում,» բառերը փոխարինել «փուլային կարգով» բառերով.

3) 4-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ՝ «Վերակառուցման ժամանակացույցը եւ պայմանները հաստատում է Կառավարությունը:»:

Հոդված 9. Օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի 4-րդ, 6-րդ կետերում եւ 7-րդ մասում «եւ տարեկան ծրագրերով» բառերը փոխարինել «ծրագրով» բառով:

Հոդված 10. Օրենքի 21-րդ հոդվածի 3.1-ին մասում հանել «ստեղծման եւ» բառերը, նույն հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 3.2-րդ մասով՝ «3.2. Անկախ կյանքի ապահովմանն ուղղված ծառայությունները, բացի անկախ կյանքի կենտրոնից, կարող են մատուցվել նաեւ «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն հավաստագրված կազմակերպությունների կողմից՝ պատվիրակման միջոցով:»:

Հոդված 11. Օրենքի 23-րդ հոդվածի՝

1) 3.1-ին մասում «փետրվարի 1-ը» բառերից հետո լրացնել «, բացառությամբ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի» բառերը,
2) 6-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 12.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ կետերի և 8-րդ հոդվածի 3-րդ կետի:
2. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով և 8-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված՝ Կառավարության որոշումներն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:
3. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ կետերը և 8-րդ հոդվածի 3-րդ կետն ուժի մեջ են մտնում սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ Կառավարության որոշումներն ուժի մեջ մտնելու պահից:

Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-603-29.05.2023-ԱՍ-011/1

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» 2021 թվականի մայիսի 5-ի ՀՕ-194-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 9-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.~~,~~

2) 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 12.1-ին կետով՝ «12.1) անկախ կյանքի ծառայություն՝ ծառայություններ, ծրագրեր, միջոցառումներ՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձի անկախ կյանքի ապահովմանը.».~~,~~

3) 1-ին մասի 16-րդ կետում «տրամադրելու» բառից հետո լրացնել «կամ վերանորոգելու» բառերը.

~~3~~4) 1-ին մասի 18-րդ կետում «աջակցող միջոցի տրամադրման» բառերից հետո լրացնել «կամ վերանորոգման» բառերը.~~,~~

5~~4~~)) 1-ին մասի 19-րդ կետում եւ 10-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-ին կետում «աջակցող միջոցների տրամադրման» բառերից հետո լրացնել «եւ վերանորոգման» բառերը:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասում «եւ տարեկան ծրագրերին» բառերը փոխարինել «ծրագրին» բառով:

Հոդված 3. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝

1) բ. ենթակետն ուժը կորցրած ճանաչել.~~,~~

2) դ. ենթակետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ «դ. հաստատում է հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող միջոցներ տրամադրելու եւ դրանց վերանորոգումն իրականացնելու կարգը եւ պայմանները, աջակցող միջոցների ցանկը, պետական հավաստագրերի եւ դրանց հիման վրա տրամադրվող աջակցող միջոցների վերանորոգման փոխհատուցման գումարի չափը, առանց պետական հավաստագրերի տրամադրվող աջակցող միջոցների եւ դրանց վերանորոգման փոխհատուցման գումարի չափը,».~~,~~

3) ե. ենթակետն ուժը կորցրած ճանաչել.~~,~~

4) է. ենթակետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 2-րդ կետում «եւ տարեկան ծրագրերի նախագծերը եւ դրանք» բառերը փոխարինել «ծրագրի նախագիծը եւ» բառերով.~~,~~

2) 5-րդ կետում հանել «ցուցումների» բառը եւ «ուղեցույցներ» բառից հետո լրացնել «՝ ըստ անհրաժեշտության» բառերը.

3) 5.1-~~.~~ին կետում «տրամադրելու» բառից հետո լրացնել «կամ վերանորոգելու» բառերը:

Հոդված 5. Օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ եւ 5-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 6. Օրենքի 12-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 7. Օրենքի 15-րդ հոդվածի 17-րդ մասում «եւ տարեկան ծրագրերի» բառերը փոխարինել «ծրագրի» բառով:

Հոդված 8. Օրենքի 17-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում «եւ տարեկան ծրագրերով» բառերը փոխարինել «ծրագրով» բառով.~~÷~~

2) 4-րդ մասում «սույն օրենքն ուժի մեջ է մտնելուց հետո՝ երեք տարվա ընթացքում,» բառերը փոխարինել «փուլային կարգով» բառերով.~~÷~~

3) 4-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ՝ «Վերակառուցման ժամանակացույցը եւ պայմանները հաստատում է Կ~~կ~~առավարությունը:~~-~~»:

Հոդված 9. Օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի 4-րդ, 6-րդ կետերում եւ 7-րդ մասում «եւ տարեկան ծրագրերով» բառերը փոխարինել «ծրագրով» բառով:

Հոդված 10. Օրենքի 21-րդ հոդվածի 3.1-ին մասում հանել «ստեղծման եւ» բառերը, նույն հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 3.2-րդ մասով՝ «3.2. Անկախ կյանքի ապահովմանն ուղղված ծառայությունները, բացի անկախ կյանքի կենտրոնից, կարող են մատուցվել նաեւ «Սոցիալական աջակցության մասին» օ~~Օ~~րենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն հավաստագրված կազմակերպությունների կողմից՝ պատվիրակման միջոցով:»:

Հոդված 11. Օրենքի 23-րդ հոդվածի՝

1) -3.1-ին մասում «փետրվարի 1-ը» բառերից հետո լրացնել «, բացառությամբ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի» բառերը.

2) 6-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:~~÷~~

Հոդված 12.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ կետերի և 8-րդ հոդվածի 3-րդ կետի:

2. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով և 8-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված՝ Կառավարության որոշումներն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

3. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ կետերը և 8-րդ հոդվածի 3-րդ կետն ուժի մեջ են մտնում սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ Կառավարության որոշումներն ուժի մեջ մտնելու պահից:

~~***Հոդված 12.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:~~

~~***Հոդված 13.*** Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում:~~

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-603-29.05.2023-ԱՍ-011/1) ԵՎ «ԱՆՁԻ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-603[1]-29.05.2023,10.07.2023-ԱՍ-011/1) ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 1-ին հոդված**	Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ կետով Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետում կատարվող փոփոխության արդյունքում վերջինս ունենում է հետեւյալ բովանդակությունը. «փոխհատուցման գումար՝ աջակցող միջոցի տրամադրման կամ վերանորոգման համար պետության կողմից կազմակերպությանը հատկացվող ֆինանսական փոխհատուցման չափը»: Այսպես՝ վերը մեջբերվածից բխում է, որ այսուհետ կազմակերպությունները իրականացնելու են ոչ միայն աջակցող միջոցի տրամադրում, այլեւ՝ դրանց վերանորոգում: Այդ դեպքում անհրաժեշտ է համապատասխան լրացում կատարել նաեւ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետում, որով սահմանված է, որ «կազմակերպություն» հասկացությունն իրենից ներկայացնում է Օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետում նշված «լիազոր մարմնի հետ սահմանված կարգով աջակցող միջոցներ տրամադրելու մասին	Ընդունվել է:	Ընդունվել է:

			պայմանագիր կնքած կազմակերպություն»: Ըստ այդմ նախագծի 1-ին հոդվածն առաջարկում ենք լրացնել նոր 3-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ՝ «3) 1-ին մասի 16-րդ կետում «տրամադրելու» բառից հետո լրացնել «կամ վերանորոգելու» բառերը.»: Վերոգրյալ դիտարկումը հիմք ընդունելով՝ անհրաժեշտ է համապատասխան լրացում կատարել նաեւ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-ին կետում նշված պայմանագրերի հետ կապված: Ըստ այդմ նախագծի 4-րդ հոդվածն առաջարկում ենք լրացնել նոր 3-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ՝ «3) 5.1-ին կետում «տրամադրելու» բառից հետո լրացնել «կամ վերանորոգելու» բառերը:»		
2.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 8-րդ հոդված**	Նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ կետով Օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասում լրացվող նոր նախադասության մեջ նշված «կառավարությունը» բառն առաջարկում ենք շարադրել մեծատառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի պահանջները.	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 10-րդ հոդված**	Նախագծի 10-րդ հոդվածով Օրենքի 21-րդ հոդվածում լրացվող նոր՝ 3.2-րդ մասում նշված «Սոցիալական աջակցության մասին» Օրենքի» ձեւակերպման մեջ առաջարկում ենք «Օրենք»	Ընդունվել է:	Ընդունվել է:

			բառը շարադրել փոքրատառով՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Նախագծի 1-ին հոդվածով սահմանված է, որ «Օրենք» բառը կիրառվում է որպես այլ օրենքի կրճատ տարբերակ:		
4.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 11-րդ հոդված**	Հաշվի առնելով այն, որ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 11-րդ մասով արդեն իսկ սահմանված է, որ ֆունկցիոնալության միջին, ծանր և խորը աստիճանի սահմանափակում ունեցող անձինք ունեն անվճար դեղեր ստանալու իրավունք (հաշմանդամության 1-ին, 2-րդ, 3-րդ խմբեր), ուստի առաջարկում ենք ուժը կորցրած ճանաչել օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասը, որով սահմանվում է, որ անժամկետ 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք ունեն անվճար, իսկ 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք՝ 50 տոկոս զեղչով դեղեր ստանալու իրավունք: Ըստ այդմ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 11-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «**Հոդված 11.** Օրենքի 23-րդ հոդվածի՝ 1) 3.1-ին մասում «փետրվարի 1-ը» բառերից հետո լրացնել «, բացառությամբ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի» բառերը, 2) 6-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:»	Ընդունվել է:	Ընդունվել է:
5.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 13-րդ հոդված**	Նախագծի 13-րդ հոդվածով սահմանվում է միայն դրանից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման ժամկետ, մինչդեռ «Նորմատիվ իրավակն ակտերի մասին» օրենքի	Ընդունվել է:	Ընդունվել է:

			13-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով սահմանված է. «Եթե օրենսդրական ակտով (բացառությամբ Սահմանադրության) սահմանված նորմը կարող է կատարվել միայն այդ ակտով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, ապա օրենսդրական ակտի անցումային դրույթներով սահմանվում են նաեւ օրենսդրական ակտի այն մասերը, որոնք գործելու են ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից»:		
6.	ԱԺ պատգամավոր Զարուհի Բաթոյան	**Նախագծի** 1-ին հոդվածի 1-ին մաս, 2-րդ հոդված, 3-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասեր, 4-րդ հոդվածի 1-ին մաս, 5, 6, 7 հոդվածներ, 8-րդ հոդվածի 1-ին մաս, 9-րդ հոդված	Առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասը, 2-րդ հոդվածը, 3-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասերը, 4-րդ հոդվածի 1-ին մասը, 5, 6, 7 հոդվածները, 8-րդ հոդվածի 1-ին մասը, 9-րդ հոդվածը:	Չի ընդունվել:	Չի ընդունվել:
	«ԱՆՁԻ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ				
1.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 6-րդ և 7-րդ հոդվածներ**	Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջը, առաջարկում ենք նախագծի 6-րդ և 7-րդ հոդվածները միավորել և շարադրել հետևյալ խմբագրությամբ. **«Հոդված 6.** 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող	Ընդունվել է:	Ընդունվել է:

			տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածով Օրենքի 2-րդ հոդվածում լրացվող 4-րդ մասի, որն ուժի մեջ է մտնում դրանով նախատեսված Կառավարության որոշումն ուժի մեջ մտնելու պահից: 2. Սույն օրենքից բխող Կառավարության որոշումն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:»		